ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/63

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.10.2017թ. թիվ 03/26-3/18256-17 գրությամբ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քննչական կոմիտեի 04.10.2017թ. թիվ 08/186769-17 գրության հիման վրա, 10.10.2017թ. թիվ 03/26-3/18256-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը կարծիք ստանալու նպատակով 10.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/18286-17 գրությամբ դիմել է «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը գնման ընթացակարգին ներկայացրել է հինգ միլիոն ՀՀ դրամից պակաս գնային առաջարկ, ուստի չի ենթադրել է, որ անհրաժեշտ կլինի ներկայացնել մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող պայմանագրերը, մինչդեռ հետագայում տեղեկացել է, որ գնման պլանով նախահաշվային գինը գերազանցում է հինգ միլիոն ՀՀ դրամը, ուստի Ընկերությունից պահանջվել են որակավորման փաստաթղթեր, որոնք սակայն չեն համապատասխանել հրավերի պահանջներին:

3. **<u>ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քննչական կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) 04.10.2017թ. թիվ 08/186769-17 գրությամբ ներկայացրել է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/63 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/63 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ն 21.09.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 4 680 000 ՀՀ դրամ:

3. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության կողմից որպես

նախկինում կատարած նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են «Ծաղկաբեր համայնքի ջրատարի մասնակի վերանորոգման աշխատանքներ» պայմանագիրը (ընդհանուր արժեքը կազմում է 4 091 600 ՀՀ դրամ), այնինչ համաձայն հրավերի՝ նմանատիպ են համարվում քաղաքաշինության բնագավառում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիաների շրջանակներում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարած լինելը, և «ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ» պայմանագիրը (գումարը կազմում է 720 000 ՀՀ դրամ), որի ծավալը՝ գումարային արտահայտությամբ պակաս է ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Հաշվի առնելով Ընկերության ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել է «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.09.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.10.2017թ. թիվ 03/26-3/18256-17 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի 04.10.2017թ. թիվ 08/186769-17 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)...»

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող համանման պայմանագրեր ներկայացվել են «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի և Ծաղկաբեր համայնքապետարանի միջև 07.10.2016թ. կնքված Ծաղկաբերի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման «ԼՄԾԳ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով գնման պայմանագիրը, որի առարկան է հանդիսանում Ծաղկաբեր համայնքի ջրատարի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարումը (ընդհանուր արժեքը կազմում է 4 091 600 ՀՀ դրամ) և ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի և «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 03.03.2017թ. կնքված շինարարության կապալի թիվ 1 պայմանագիրը, որի առարկան է հանդիսանում ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգման (լրացուցիչ) շինարարական աշխատանքների կատարումը և նախագծանախահաշվային փաստաթղթերի իրագործումը (ընդհանուր արժեքը կազմում է 720 000 ՀՀ դրամ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերի մեջ և առաջարկել է մեկօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընդ որում՝ Ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում քաղաքաշինության բնագավառում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիաների շրջանակներում շենքերի ու շինությունների ընթացիկ նորոգման*** աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Այսպես, Ընկերության կողմից որպես համանման ներկայացված պայմանագրերից՝ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի և Ծաղկաբեր համայնքապետարանի միջև 07.10.2016թ. կնքված Ծաղկաբերի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման «ԼՄԾԳ-ՊԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսվել է Ծաղկաբեր համայնքի ջրատարի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարումը, մինչդեռ հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում ***քաղաքաշինության բնագավառում բնակելի, հասարակական և արտադրական լիցենզիաների շրջանակներում շենքերի ու շինությունների ընթացիկ նորոգման*** աշխատանքների կատարումը, հետևաբար նշված պայմանագիրը չի կարող դիտարկվել որպես նմանատիպ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի և «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 03.03.2017թ. կնքված շինարարության կապալի թիվ 1 պայմանագրին, որի առարկան է հանդիսանում ՀՀ լոռու մարզի Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգման (լրացուցիչ) շինարարական աշխատանքների կատարումը և նախագծանախահաշվային փաստաթղթերի իրագործումը, ապա վերջինիս ընդհանուր արժեքը կազմում է 720 000 ՀՀ դրամ, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմում է 4 680 000 ՀՀ դրամ: Հետևաբար նշված պայմանագիրը չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով և հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջը, այն է՝ նախկինում կատարված պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պետք է պակաս չլինի տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի ***հիսուն տոկոսից:*** Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի ***քսան տոկոսից:***

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը: Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության հայտը չի բավարարում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին, քանի որ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից նշված չափանիշը հիմնավորելու համար ներկայացված պայմանագրերից մեկի շրջանակներում կատարված աշխատանքները նույնատիպ չեն հրավերով պահանջվող աշխատանքներին, իսկ մյուս պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքների գումարային ծավալը չի բավարարում ներկայացված գնային առաջարկի քսան և հիսուն տոկոսից պակաս չլինելու

պահանջը: Ուստի դրանք չեն կարող դիտարվել որպես համանման պայմանագրեր: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 3 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով, չի համապատասխանում իրականությանը (կեղծ տվյալ):

Միևնույն ժամանակ հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, այլ ներկայացրել է հայտարարություն՝ որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանության մասին, որը հիմնավորելու համար Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում պարզվել է, որ նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը և որպիսի հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը սույն մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.10.2017թ. թիվ 03/26-3/18256-17 գրությամբ «Մելանյա Մովսեսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06939704) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**